ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.3.2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. փետրվարի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաջյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝

- **«Փրկարար ուսումնական կենտրոն» ՀԿ-ի** կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Փրկարար ուսումնական կենտրոն» ՀԿ-ի** կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝ հայտում ներկայացված չեն **արկածային զբոսաշրջության ոլորտի** ղեկավարների, մասնագետների և/կամ աշխատակիցների համար նախատեսված կրթական ծրագրերի, դասընթացների և/կամ վերապատրաստումների իրականացման 2 տարվա գործունեության, ինչպես նաև ոլորտային կրթական ծրագրեր իրականացնող (զբոսաշրջություն, հյուրընկալություն, կառավարում և/կամ հարակից ոլորտներ) կազմակերպությունների հետ փաստաթղթավորված փաստացի համագործակցության փորձը հավաստող պայմանագրեր (ներառյալ հանձման, ընդունման ակտերը), և/կամ տեղեկանքներ, և/կամ այլ փաստաթղթեր՝ հակասելով Հրավերի 2.3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջներին:

Միաժամանակ, Հայտում կցված աշխատանքային պլանում գործողությունները սահմանված են 1 ամսվա (հունվար) համար, իսկ ներկայացված Ֆինանսական նախահաշվում նշված է 10 աշխատակցի աշխատավարձ, սակայն կցված է 7 ինքնակենսագրական:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Փրկարար ուսումնական կենտրոն» ՀԿ-ի**

կողմից ներկայացված հայտը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	
Ս.Հովհաննիսյան	-	
Դ.Կարապետյան	-	
Ա.Բաբայան	-	
Հ.Սահակյան	-	
Լ.Բասմաչյան	-	
Զ.Հայրապետյան	-	
Շ.Հովսեփյան	-	